XVII-ԴԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԱՄԱԼԻՐ ԱՐՑԱԽՈՒՄ

Պատմական Հայաստանի Արցախ-Նահանգը, որը տարածվում էր Հայկական լեռնաշխարհի արևելյան կողմում և ուներ 12 գավառ, դեռևս վաղ միջնադարից հայտնի էր իր ինքնատիպ ու զարգացած ճարտարապետությամբ։ Երկրամասի տարածքում են գտնվում հայ ճարտարապետության ուշագրավ այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Ամարասի, Դադի, Օխտը դոնե վանքերը (IV—V դդ.), Գանձասարը, Բռի եղցին, Գտիչը (XIII դար) և այլն։ Ուշ միջնադարում



Նկ. 1

Արցախը հարևան Սյունիքի հետ միասին վայելում էր կիսանկախ դրություն։ Այդտեղ գոյացել էին մի շարք փոքրիկ իշխանություններ (մելիքություններ), որոնք, շնորհիվ ազգային-ազատագրական պայքարի, հարատևեցին մինչև այդ տարածքի Ռուսաստանին միանալը։ Արցախը իրոք լեռնային երկրամաս է, ուր կան անտառներ ու լեռնային արտագահոս գետեր, հովիտներ ու կիրճեր։ Այդ բոլորը, ինչ խոսք, դրական մեծ նշանակություն են ունեցել հայ ժողովրդի արցախյան հատվածի դարավոր ինքնապաշտպանության համար։ Այս նահանգի տարածքում բնակվող հայ ժողովուրդը, գտնվելով կիսանկախ դրության մեջ և ղեկավարվելով սեփական մելիքների կողմից, կարողացավ ծավալել համեմատաբար լայն շինարարություն։ Արցախում հաստատված մելիքները հովանավորում, իսկ հաճախ իրենք էլ մասնակցում էին տարբեր կառույցների շինարարությանը։ XVI դարի վերջերից սկսած Արցախում սկսեցին վերակենդանանալ հարյուրավոր գյուղեր ու ավաններ։ Առանձնապես բարգավաճում էին այն բնակավայրերը, որոնք հանդիսանում էին մելիքությունների կենտրոններ, ուր նստում էր տվյալ գավառի տերը։ Այդ և հաջորդ դարաշրջաններից մեզ են հասել բազմաթիվ ճարտարապետական հուշարձաններ։

Ուշ միջնադարի վանքային նմանօրինակ դասական հայտնի հուշարձաններ են Սյունիքում գտնվող Տաթևի մեծ անապատը, Շատին վանքը, Հալիձորի Հարանց անապատը, Շնհերի Կուսանաց անապատը, Գնդեվանքի, Տաթևի կից շինությունները և այլն։ Արցախի նման համալիրները դեռևս շատ քիչ են ուսումնասիրված։ Այնինչ ինչպես Սյունիքում, հարևան ու բախտակից Արցախում ևս կառուցվել ու մեծ մասամբ պահպանվել են ուշ միջնադարի բազմաթիվ վանական համալիրներ՝ բաղկացած եկեղեցուց, տնտեսական նշանակության բազմաթիվ շենքերից, պաշտպանական կառուցվածքներից և այլն։ Արցախում այդպիսիք են Մեծ Արանց Սուրբ Հակոբա վանքը, Ամարասի հուշարձանախումբը, Ինը Մասանց անապատը, Բաղիրխանի վանքը, Երից Մանկանց վանքը և այլն։ Վերջին երկուսը ներկայացնում ենք ստորև։ Առաջինը, որը գտնվում է պատմական Արցախի, ուշ միջնադարում Վարանդա անվամբ հայտնի գավառի արևմտյան կողմում, հինավուրց Ննգի և Քոասնի գյուղերի միջև, հայտնի է Բաղիրխանի (Բովըրխանի) վանք անվամբ (նկ. 1)։ Այն գտնում է համանուն լեռան հյուսիսային լանջին, շրջապատված փարթամ անտառներով։ Ներկայումս անտառով է ծածկվել նաև բուն հուշարձանախումբը, որ բաղկացած է միանավ թաղածածկ եկեղեցուց (գծ. 1), կից բնակելի ու տնտեսական



Գծ. 1

մի քանի սենյակներից ու պարսպապատից. վերջինս հարավ-արևմտյան անկյունում ավարտվում է կիսաշրջան աշտարակով, իսկ արևելյան կողմից ունեցել է դարպաս[1] (այժմ կիսավեր)։ Բաղիրխան վանքի վերաբերյալ հիշատակություններ են պահպանվել գլխավորապես անցյալ դարի հայ երախտաշատ գիտնական-աղգագրագետներ Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցի[2] և Երվանդ Լալայանցի[3] աշխատություններում։ Այդ աղբյուրները հիմնավոր տվյալներ են պարունակում հուշարձանի տեղագրության, վիճակի, տեղում գտնված կարևոր արձանագրությունների վերաբերյալ։ Հնավայրի տարածքից Մ. Բարխուտարյանցը արտագրել է երկու արձանագրության պատատիկներ, որոնք ներկայումս չեն պահպանվել։ Մի կոտրված և փոքր խաչքարի վրա եղել է.

ԽԱՉՍ ՏԱՆՆ ԱՐԽԻ։
Այլ փոքր խաչքարի վրա.
ԽԱՉՍ Կ.ԵՍ Բ. Հ. ։

Թեև Մ. Բարխուտարյանցը արձանագրությունների ժամանակի մասին տեղեկություններ չի հաղորդում, բայց ընդհանուր ոճից ու իմաստից ելնելով կարելի է եզրակացնել, որ դրանք վերաբերում են XVII—XVIII դդ.։ Այլ վիմագրեր չեն հայտնաբերվել։ Հուշարձանախումբը, որ գտնվում է հնագույն ճանապարհից մոտ երեք կիլոմետր հեռու, այժմ խիստ ավերված է, «անվնաս մնում է միայն վանահոր սենյակն, ամբողջապես խոնարհված են միարանից սենյակների գլուխները»[4]։ Վանահոր սենյակը կից է պարսպապատին արևմուտքից (նկ. 2), իսկ միարանների չորս խուցերն ու գոմի շենքը, որոնք կից են պարսպապատին հարավից, վաղուց արդեն ղրկվել են ծածկից։ Միարանների խուցերն իրար հետ չեն հաղորդակցվում, յուրաքանչյուրի մուտքն առանձին է, ինչը բնորոշ է «անապատ» հուշարձաններին։ Խուցերը ունեն խիստ միանման ձևեր ու չափեր, երկուսն ունեն նաև մեկական ոչ մեծ, դեպի ներս լայնացող լուսամուտներ՝ բացված գլխավոր պարսպապատից։ Համալիրում, առանց բացառության, բոլոր շենքերն էլ կառուցված են անաչառ ու կոպտատաշ տեղական դեղնասպիտակավուն քարերից։ Սրբատաշ են միայն վանահոր թաղածածկ սենյակի լուսամուտի ու դռան անկյունաքարերը։ Համալիրի հարավ-արևմտյան անկյունում է գտնվում արևելք-արևմուտք ուղղությամբ ձգված, ուղղանկյուն հատակագծով, թաղածածկ, այժմ ավերակ մի շինություն, որն ունի մեկ դուռ և մեկ լուսամուտ՝ բացված հարավային պարսպապատից և բազմաթիվ խորշեր հյուսիսային ու արևմտյան պատերի մեջ։ Արևմտյան պատի կենտրոնում երկու



Նկ. 2

խորշերի միջև է բուխարին, որը միակն է համալիրում պահպանվածների մեջ։ Հաշվի առնելով այս սենյակի (չափերը՝ 325×1060) առանձնահատկությունները, կարծում ենք, որ այն հավանաբար ծառայել է որպես գոմ։ Շենքի հարավ-արևմտյան անկյունից բացվում է մի նեղ դուռ, որը տանում է բուրգի ներսում գտնվող բոլորաձև սենյակը, որն ունի 240 սմ տրամագիծ. այն համալիրի լավ պահպանված կառույցներից է։ Աշտարակից բոլոր կողմերի վրա բացվում են թվով հինգ, դեպի ներս լայնացող, փոքր լուսամուտներ։ Այդտեղից բացվում է ոչ մեծ ձորակի ամբողջ տեսարանը։ Բուրգի, գուցե նաև գոմանոցի և մյուս շենքերի վրա, հավանաբար, եղել է երկրորդ հարկաբաժին, որի միակ ապացույցն են գոմի և վանահոր սենյակի միջև դրտնվող փոքրիկ թաղածածկ միջանցքից բարձրացող քարե լայն ասաիճանները, որոնք մեծ մասամբ պահպանվել են և տանում են մինչև արևմտյան գլխավոր պարսպապատը։ Սակայն երկրորդ հարկում երբեմնի շենքերից ոչինչ չի պահպանվել և դրանց հատակագծի մասին, մանավանդ առանց հնագիտական պեղումների, ստույգ քիչ բան կարելի է ասել։ Համալիրը հյուսիսային կողմից շրջապատված է մեծաչափ քարաժայռերով և կանոնավոր պարսպապատ չկա։ Միայն ժայռից ժայռ ծուռումուռ պատեր են ձգվում, որոնք այստեղ շարված են առանց կրաշաղախի։ Կենտրոնական մասում, եկեղեցուց քիչ արևմուտք նկատվում են ինչ-որ սենյակների հիմնապատեր, որոնք այժմ լցված են հողով ու ծածկված ծառերով ու թփերով։

---

[1] Հուշարձանախմբի չափագրությունները կատարել են Վ. Զարյանը և Ս. Կարապետյանը։

[2] Մ. Բարխուտարյանց. Արցախ. Բաքու, 1895, էջ 109։

[3] Ե. Լալայանց. Վարանդա. Թիֆլիս, 1898, էջ 50—51։

[4] Մ. Բարխուտարյանց. Նշվ. աշխ., էջ 109։

Հուշարձանախմբի շենքերից առավել բարվոք վիճակում է եկեղեցին, որն ուշ միջնադարին բնորոշ միանավ բազիլիկի հորինվածք ունի։ Կիսաշրջան թաղը հենված է մեկ գույգ որմնասյուների վրա։ Արևելքում ավագ խորանն է, որից բացվում է մեկ լուսամուտ։ Երկու լուսամուտ էլ բացվում են հարավային ճակատից։ Հյուսիսից՝ եկեղեցուն կից է ուղղանկյուն հատակագծով ավանդատունը, որի դուռը բացվում է եկեղեցու մեջ։ Ավանդատան հյուսիսային կողմը արտաքինից ամբողջապես թաղված է հողի մեջ, այդ կերպ վաղուց փակվել է նաև ավանդատնից բացվող լուսամուտը։

Պարսպապատ համալիրի միակ ու գլխավոր դարպասը գտնվում է եկեղեցուց մի քանի մետր արավ։ Այստեղ հարկ է նշել, որ գոմի շեներից, ինչպես վերևում նշեցինք, նույնպես բացվում էր մի դուռ, որն իր չափերով ու նշանակությամբ գիջում է արևելյան դարպասին։ Երկրորդական նշանակություն ունեցող այս մուտքը, որը գտնվում է աշտարակին խիստ մոտ, վերջինիս սկզբության տակ, հավանաբար ծառայել է վանքապատկան անասունների համար։ Բոլոր շենքերն էլ ունեն XVII դարին բնորոշ ճարտարապետական ոճական հորինվածք։ Պարսպապատի հաստությունը մեկ մետր է, աշտարակի մասում՝ 90 սմ։ Վանքի Բաղիրխան անվանումը թույլ է տալիս ենթադրել, որ այն առաջացել է Վարանդա գավառի իշխան Մելիք Բաղիրի անունից։ Վերջինս իշխել է XVII դարի առաջին կեսին, մինչև 1646 թ.։ Վանքը հաստատված է Մելիքությունի իշխանանիստ Ավետարանոց (Զանախչի) գյուղից (այժմ՝ Լենային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շրջան) հյուսիս, շուրջ 10 կմ հեռու։

Ուշ միջնադարի հետաքրքրական վանական



Նկ. 3

համալիր է Բաղիրխան վանքից հյուսիս, Ջրաբերդ գավառում գտնվող Երից Մանկանց վանքը (Նկ. 3)։ Հուշարձանը գտնվում է Մոսավ լեռնաշղթայի հարավային լանջից սկիզբ առնող Թրղի գետի ձախ ափին։ Տեղանքն ունի հրվանդանի ձև, որը միրճված է Թրղիի ոլորաններից մեկի մեջ։ Վանքից բացվում է ընդարձակ տեսարան և՛ Թրղիի հովտով դեպի վեր, և՛ դեպի վար։ Ներքևում հինավուրց Ջարարերդն է (Ջրաբերդ), հեռավորությունը 5 կմ, իսկ գետի հոսանքով դեպի վեր, իրարից ոչ հեռու, կան մի քանի լրված գյուղատեղեր։ Թվենք դրանք, ըստ հերթականության, սկսած Երից Մանկանց վանքից. ընդամենը 4 կմ վեր խոտորաշեն գյուղի ավերակներն են։ Սա հայտնի է նրանով, որ ծննդավայրը է Աղվանից երկու հակաթոռ կաթո-

ղիկոսների, որոնք երկուսն էլ հայտնի են Սիմեոն Խոտորաշենցի անվամբ։ Առաջինը գահակալել է 1675—1701 թթ.[5], մյուսը 1794—1810 թթ.։ Խոտորաշենից 3—4 կմ վեր Ծոս բրնակավայրն է հիմնավեր եկեղեցիով և տնատեղերի բազմաթիվ հետքերով, անտառով ծածկված։ Ծոսից մի լեռնային կածան, դարձյալ Թրդիի ձախ ափով, բարձրանում է ու հասնելով վերջինիս ձախ ամենաջրառատ վտակին՝ Մռաչգետին, իջնում է Ձորահովիտն ու Ջաղացնեվեղարով ուղանիստ թմբուկը։ Նրա յուրաքանչյուր նիստից բացվում է մեկական, դեպի ներս լայնացող լուսամուտ (նկ. 4)։ Գմբեթը պահում են տաճարի սրբատաշ չորս սյուներ։ Գմբեթաձակ քառակուսուց անցումը գմբեթարդին իրականացված է առագաստների միջոցով։ Շենքի արևելյան կողմում ավագ խորանն է՝ հյուսիսից ու հարավից կից ավանդատներով, որոնք հատակագծում ունեն ուղղանկյան ձև և երկհարկանի են։ Ավագ խորանից բացվում են թվով յոթ



Գծ. 2

րի ավերակների մոտով անցնում վտակը և հասնում Ղրբլբի անունով վանքի ավերակներին։ Սակայն մինչև այդ վանքին հասնելը Թրդիի ձախ ափին կածանն անցնում է նաև մի այլ լքված գյուղատեղի միջով, որը հայտնի է Տկողնուտ գյումեր անվամբ։ Նշվածներից բացի հովտում կան և այլ բնակատեղերի հետքեր, այդ թվում Ջալաղան յուզբաշու ամրոցը՝ վանքից ցած, որոնք հեռու են հովտով ձգվող «գլխավոր ճանապարհից» և գտնվում են Թրդիի բազմաթիվ վտակների խոր ձորերում, մութ անտառներով ծածկված։ Հովտի կենտրոնում կանգնած երից Մանկանց վանքը այս բազմաթիվ հնություններ մեջ առավել լավ պահպանվածն է ու մեր ուսումնասիրության հիմնական առարկան։ Համալիրը բաղկացած է մեկ եկեղեցուց, որն ունի եռանավ գմբեթավոր բազիլիկի հորինվածք, սեղանատունից, միաբանների սենյակներից, պաշտպանական կառուցվածքներից ու գերեզմանոցից (գծ. 2)[6]։ Համալիրում կենտրոնական գիրք ունի եկեղեցին, որի կառուցումն ավարտվել է 1691 թ.։ Տաճարը կերտված է կոպտատաշ ու սրբատաշ դեղնասպիտակավուն կրաքարերից։ Չորս ճակատներում համակ սրբատաշ են միայն շենքի վերին՝ ճակտոններին հարող հատվածներն ու անկյունաքարերը։ Սրբատաշ է նաև սրածայր խորշեր։ Երկրորդ հարկի ավանդատնից տանող արտաքին աստիճաններով նեղ դուռը բացվում է ավագ խորանի մեջ, սակայն հատակին չի հասնում, իսկ մնացած մասի համար օգտագործվել են կախովի սանդուղքներ։ Ուշ միջնադարի տաճարներում երկրորդ հարկի ավանդատների նշանակությունը ունեցող եկեղեցիների հանդիպում ենք Արցախի այլ վայրերում ևս (Ծակուռիի Ծաղկավանք, Ուլուպապի Պտկի Սուրբ Գևորգ և այլն)։ Ավագ խորանի կենտրոնում պահպանվել է վեմ քարը։ Հյուսիսային պատի մեջ ներսից, իր ավանդական տեղում է մկրտարանը։ Պահպանվել է նաև վանքի դուռը, որը խիստ ուշագրավ երևույթ է։ Իր տեղում է նաև վեղարի ծայրում, խնձորակի վրա ամրացված խաչը։ Վանքը սալահատակված է, որի արևելյան կեսը պահպանվել է ամբողջությամբ։ Տաճարի գմբեթակիր չորս կամարներն էլ ունեն շեշտված սլաքաձևություն։ Եկեղեցու մուտքի (բացվում է հարավից) ճակատակալ քարի վրա է վանքի կարևոր արձանագրություններից մեկը։ Այն փորագրված է տասը տողով.

Ի ՌՃԽ ԹՎ / ԻՍ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՇԱՀ ՍՈՒԼ / ԷՅՄԱՆԻՆ ՄԵԾԻ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՍԻՑ / ԵՍ ՍԻՄԵՈՆ ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ Կ[Ա]Թ[Ո]Ղ[Ի]ԿՈՍ Ա / ՂՈՒԱՆԻՑ ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ ԸՆԴ / ՀԱՐԱՁԱՏ ԵՂԲԱՐԲ ԻՄՈՎ ԻԳՆԱՏԻՈՍԻ Վ[Ա]ՐԴ[Ա] / Պ[Ե]ՏԻՆ ՈՐ ԵՎՔ ՈՐԴԻՔ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ-

---

[5] Եկեղեցու բարավորի արձանագրությունից՝ «Որ եմք որդիք Սարգիս քահանային մեծշինեցոյ» պարզ է, որ Սիմեոն I-ը Մեծշենցի էր։

[6] Ձափագրությունները մերն են—Ս. Կ.

Յ[Ի]Ն7 / ՄԵԾՇԻՆԵՑՈՅ ՅԱՂՕԹՍ ՅԻՇԵՑԷՔ / ՈՐԴԻՔ ՆՈՐ ՍԻՕՆԻ Ի ՄՏԱՆԵԼՆ / ԵՎ ՅԵԼՍՆԻԼՆ ԴՐԱՆՍ Տ[Է]ՐՈՒՆԻ ԱՄԷՆ8։

Երկրորդ կարևոր արձանագրությունը փորագրված է ավագ խորանի արևմտահայաց ճակատին, վեց տողով.

1. ԿԵՐՏԵՑԱՎ ԱՅՍ ՅԱՐԿ ՆՈՒԻՐԱՆԱՑ ՏԱՆ ԱՅ ԵՒ ՏԱՃԱՐ ՓԱՌԱՅ ՆՈՐՈՅ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԱՅ, ԶՈՐ ՏՐ ՅՍ ՄԷԶ ԱՎԱՆԴԵԱՑ ՇԻ



Նկ. 4

2. ՆԵՑԱԻ ՅԵՐԿՈՒՑ ՀԱՐԱԶԱՏԱՑ ՍԻՄԵՕՆ Կ[Ա]Թ[Ո]Ղ[Ի]Կ[Ո]ՍԻ ԵՎ ԻԳՆԱՏԻՈՍԻ ԲԱԲՈՒՆԵԱՑ ԵՎ ԱՅԼ ՅՈՔՈՒՆՑ ԱՇԽԱՏՈՂԱՑ ԳՐԵ

3. ԼՈՅ Ի ԴՊՐՈՒԹԻ ԿԵՆԱՑ Ի ԹՈՒԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՅ ԱԶ[Գ]Ի ՀԱԶԱՐ ՀԱՐԻՒՐ ԵՎ ՁՈՐՍ ՏԱՍՆԻ (1691 թ.) ԱՎԱՐՏԵՑԱՒ ՍՈ

4. ՅՆ ԵԿԵՂԵՑ[Ի]ՔՍ Ի ՓԱՌՍ ԱՆՃԱՌՆ ՏՐՆ ՅՍԻ ՈՐՔ ԱՂՕԹԷՔ ԵՎ ԵՐԿԲՊԱԳԷՔ ՅՈՒՂԻՂ ՄՏՕՔ ՅԱՅՍ ՆԿԱՏԷՔ

5. ԱՂԵՐՍԱՆՕՔ ԶՏՆ ՅԻՇԵՑԷՔ ԵՎ ՅԱՆՅԱՆԱՑ ՄԵՐՈՅ ԹՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵՑԷՔ ԵՎՍ ԱՌԱՒԵԼ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՅ

6. ՄԱՐՄՆԱՒՈՐԱՑ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅԻ ԵՎ ՄՕՐ ՄԵՐՈՒՄԱՅ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ ՍՄԱ ԱՄԷՆ։

Աղբյուրները մեզ հայտնում են, որ Երից Մանկանց վանքը եղել է հակաթոռ Գանձասարին և պառակտիչ նշանակություն է ունեցել։ Ինչպես պարզվում է բարավորի արձանագրությունից, Ջրաբերդ գավառի Մեծ Նեն գյուղի Սարգիս քահանայի որդի Սիմեոնը (գահակալել է մինչև 1705 թ.) 1691 թ. կառուցել է տվել եկեղեցին ու ակիզբ դրել այն կատագի վեճերին ու հակառակության, որ շարունակվեց և իր հաջորդ Ներսես կաթողիկոսի օրոք։ Սիմեոնի և Գանձասարի Երեմիա կաթողիկոսի (1676—1700) միջև ծագած անհաշտ պայքարը հարթելու միտումով հանդես եկավ էջմիածնի Նահապետ Ա Եղեսացի կաթողիկոսը (1691—1705). արդյունքը այն էր, որ ինքնակոչ Սիմեոն կաթողիկոսը հատուկ պարտավորվեց, որ իր տոհմից այլևս ոչ ոք չպետք է կաթողիկոս դառնա։ Սակայն 1705 թ., հակառակ Սիմեոնի խոստման ու ստորագրության, նրան հաջորդեց իր ազգական Ներսեսը (գահակալել է մինչև 1736 թ.), որի օրոք պայքարն ավելի սրվեց, այս անգամ արդեն Ներսեսի և Գանձասարի Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանցի միջև։ Երկու տարի անց՝ 1707-ին, դարձյալ երկու կաթողիկոսները կանչվեցին էջմիածին, և Ամենայն Հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցին (1706—1714), հանգամանորեն քննելով հարցը, նզովեց Ներսեսին և օրինական կաթողիկոս հայտարարեց Եսայուն9։ Սակայն ազգային-ազատագրական պայքարը ոգեշունչ մարտիկ Եսայի կաթողիկոսը, Հիշտ բարոնելով ձգձգվող թշնամությունից հայոց ընդհանուր գործին հասցվող վատ հետևանքները, նպատակահարմար գտավ հաշտվել Ներսեսի հետ։

Այնուհետև Երից Մանկանց վանքում կաթողիկոս հռչակվեց Ներսեսի քրոջ որդի Իսրայելը (1728—1763), հետո Սիմեոնի եղբորորդի Սիմեոն փոքր (2-րդ) կաթողիկոսը, որը Խոտորաշենցի է հիշատակված (գահակալել է մինչև 1819 թ.)10։ Երից Մանկանց վանքին ու նրա առաջին ինքնակոչ կաթողիկոս Սիմեոնին վերաբերող հետաքրքրական տվյալներ ունի Մ. Բարխուտարյանցը11։ Վանքի արձանագրությունների տարբեր հրատարակումների մեջ ուշագրավ է հետևյալ թյուրիմացությունը։ Մ. Բարխուտարյանցը ավագ խորանի ճակատին փորագրված «Ի թուականիս հայոց ՌՂԴ հազար հարյուր և չորս տասնի» վերծանել է «Ի թուականիս ՌՃԺԴ», որը 1664 թ. է։ Սակայն փաստերը գալիս են հաստատելու, որ բարավորի վրա հիշատակված է եկեղեցու շինության ճիշտ թվականը՝

7 Երից Մանկանց վանքից 6 կմ հարավ-արևմուտք, Անապատ եկեղեցու բարավորի շինարարական արձանագրության մեջ հիշատակված է միևնույն Սարգիս քահանան։ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր «Ջրաբերդի Անապատը» հոդվածը («էջմիածին», 1984, 6)։

8 Այս և հաջորդ վիմագրերը վերցնում ենք Ս. Բարխուդարյանի վերծանությունից (Դիվան հայ վիմագրության. պր. 5, Երևան, 1982, էջ 96—97)։

9 Լ ե ո. Երկերի ժողովածու. հ. 3, գիրք 2-րդ, Երևան, 1973, էջ 116։

10 Բ ա ֆ ֆ ի. Խամսայի մելիքությունները.— Երկերի ժողովածու. հ. 10, Երևան, 1964, էջ 229։

11 Տե՛ս Մ. Բ ա ր խ ո ւ տ ա ր յ ա ն ց. Նշվ. աշխ., էջ 232։

Ռձև (1691)։ Եվ իրոք, 1691 թ. պարսից շահ էր Սուլեյմանը (1666—1694)։ Երից Մանկանց վանքի եկեղեցին չէր կարող կառուցված լինել 1664 թ., քանի որ այդ ժամանակ Սուլեյմանը դեռ շահ չէր հռչակված, ինչպես նշված է շինարարական արձանագրության մեջ։ Արձանագրության միակ ճիշտ վերծանումը պատկանում է Ս. Բարխուդարյանին, որը «Ի թուականիս Հայոց ազգի հազար հարիւր եւ չորս տասնի» վերծանել է 1691 թ.[12]։ «Չորս տասնի» քառասուն պետք է կարդալ, որից և ծագել էր ամբողջ անճշտությունը ու տեղ գտել մասնագիտական գրականության մեջ[15]։ Առավել ևս անիրական է վանքը 1651 թ. հիմնադրված լինելու մասին Բաֆֆու կարծիքը։ 1691 թ. վերոհիշյալ երկու շինարարական արձանագրություններից բացի կա ևս մեկը, որը մեզ հայտնում է Երից Մանկանց վանքի ճարտարապետ-կառուցողի անունը։ Երեք տողով այդ արձանագրությունը փորագրված է հյուսիսային պատի արևելյան մույթի վրա, ներսից.

ՇԻՆՈՂ ԵՒ ՎԱՐՊԵՏ
ԵԿԵՂԵՑՒՈՅՍ ՈՒՍՏԱ
ՍԱՐԳԻՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍԻ[14],

Առավել հին թվակիր խաչքարերի առկայությունը վանքի պատերի մեջ եկեղեցու կառուցումից առաջ տեղում գերեզմանոցի, գուցե և եկեղեցու կամ մատուռի գոյության ապացույց է[15]։ Հյուսիս-արևելյան ավանդատան հյուսիսային պատի խորշի մեջ տեղադրված խաչքարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Թ[Վ]։ ՌԻ։ՄԼՄ։ (1571 թ.)

Մեկ ուրիշի վրա, որը գտնվում է հարավ-արևելյան ավանդատան հարավային խորշի մեջ, կարդում ենք.

ՍԲ Խ[Ա]ՉՍ Շ[Ա]ՀՈՒՄԻՆ ՄԵԼՔՈՒՄԻՆ
Թ։ՌԿԻ (1620 թ.)։

Հայտնի է, որ 1854 թ. վանքը արդեն չուներ ոչ մի կալվածք, համարյա ամայի էր ու խնամվում էր «մուղդուսիների» (մահաբեսիների) կողմից (որոնք նույնիսկ հոգևորական էլ չէին)[16]։ 1860 թ. է վերաբերում տաճարի ներսում, հարավ-արևելյան կողմի սյան վրա փորագրված արձանագրությունը, որը տեղեկացնում է արևելյան երկու սյուների շինության (հավանաբար նորոգման) մասին (նկ. 5)։

Նկ. 5

Եկեղեցու շրջապատում կանգուն են սեղանատան ու տնտեսական մյուս շենքերը։ Սրանցից առաջինը գտնվում է եկեղեցուց 10—15 մ հյուսիս-արևելք, ուղղանկյուն հատակագծով թաղածածկ շենք է, բաղկացած երեք մասից։ Սենյակներից երկուսում էլ, որոնք բաժանված են թաղակապ միջանցքով, առկա են բազմաթիվ խորշեր և բուխարիներ։ Եկեղեցուց մի քանի մետր հարավ-արևելք պահպանվել են իրար կից երկու թաղակապ սենյակներ, որոնց արևելյան կողմում կիսաշրջան աշտարակն է, որի ներսում 380 սմ տրամագծով բոլորաձև սենյակն է։ Այստեղ ևս պատերի մեջ բացված են խորշեր և մեկական լուսամուտ ու բուխարիկ։ Սենյակը մյուս թաղածածկ զույգ սենյակների հետ հաղորդակցվում է փոքրիկ դռնով։ Զույգ սենյակներն էլ ունեն միևնույն հորինվածքը։ Երկուսի թաղն էլ հենված է սրբատաշ որմնակամարին, որը հենվում է պատի վերին մասից ցցված սրբատաշ խոյակի վրա։ Հարավային կողմի սենյակը ձորի կողմից ունի

12 Դիվան հայ վիմագրության. պր. V, էջ 96—97։

13 Անճշտությունը կրկնված է՝ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 3, էջ 591։ Շ. Մկրտչյան. Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները. Երևան, 1980, էջ 53։

14 Դիվան, պր. V, էջ 97։

15 Մեր այս կարծիքի օգտին է խոսում այն հանգամանքը, որ Երից Մանկանց վանքում ստեղծված մի քանի ձեռագրեր թվագրվում են ավելի վաղ, քան 1691 թ.։ Այսպես՝ Մատենադարանում պահվող № 8139 ձեռագիր «Մաշտոցը» (գրիչ՝ Ղազար վարդապետ) գրված է 1214 թ.։ № 2928 ձեռագիր «Աւետարանը» (գրիչ՝ Աթանաս արեղա, ստացող՝ Ըոստամ) գրված է 1565 թ., № 1505 ձեռագիրը «Յայսմաւուրքը» (ծաղկող՝ Պողոս եպս. Մելտենցի, ստացող՝ Յակոբ վրդ.) գրված է 1592 թ.։ № 3446 ձեռագիր «Ժողովածուն» (գրիչ և ստացող Իգնատիոս Մեծշենցի) գրված է 1661 թ.։ Միակ ձեռագիր «Մաշտոցը», որը գրվել է Երից Մանկանց վանքի ներկայիս եկեղեցու կառուցումից (1691 թ.) հետո, № 1078 ձեռագիրն է՝ 1760 թ. (գրիչ՝ Աբրահամ Շաքեցի)։

16 Լեո. Իմ հիշատակարանը. Շուշի, 1890, էջ 277։

մեծաչափ, լայն բացված լուսամուտներ, որոնք կամարակապ պատշգամբի տպավորություն են թողնում։ Բոլոր շենքերն էլ ունեն բուխարիկներ ու կառուցված են անտաշ ու կոպտատաշ քարերից, բացառությամբ անկյունաքարերի ու որմնակամարների, որոնք սրբատաշ են։ Համալիրը պարսպապատ է եղել, որից տեղ-տեղ հետքերն են մնացել։ Դրանց մի մեծ մասը ծածկված է փլվածքներով ու դարավոր հողի շերտով։ Հետագա ուսումնասիրության ու անհրաժեշտ պեղումների շնորհիվ կլուսաբանվեն Երից Մանկանց վանքի պատմաճարտարապետական ու հնագիտական շատ մութ հարցեր։

Ս. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ОБ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В ГРОЗНОМ

Как известно, в силу исторических, экономических и политических обстоятельств часть армянского населения вынуждена была в разные времена покидать свою родину и эмигрировать в другие страны. Одним из районов, который привлек значительное число армян, стал Северный Кавказ, где в XVIII—XIX вв. в ряде городов и станиц возникли армянские колонии и поселения. Армяне на чужбине обычно стремились сохранить свой быт и нравы, свою культуру и духовную жизнь. Они заботились не только о строительстве жилищ и организации национальных школ, благотворительных обществ, театров и др., но и о возведении церквей. Об армянской церкви в г. Грозном и пойдет речь в настоящем сообщении.

В Грозном, нынешней столице Чечено-Ингушетии, армянская церковь была возведена в начале 70-х годов XIX столетия. Строительство этого культового сооружения всего через полвека после основания города было обусловлено усилением местной армянской общины. К сожалению, церковь просуществовала недолго, ее снесли в начале 1930-х годов. Нам пока не удалось обнаружить архивных документов, которые позволили бы дать подробный и достоверный анализ архитектурно-конструктивного решения этого достопримечательного сооружения. Тем не менее, еще в период строительства, а затем и функционирования появились заметки о нем в периодической печати и некоторых научных изданиях прошлого века. В фондах Респ. краеведческого музея Чечено-Ингушетии мы обнаружили пять фотоснимков церкви, сделанных в разные годы и запечатлевших ее с разных сторон. Из-за отсутствия чертежей, обмеров и рисунков памятника эти фотоснимки приобретают важное значение и являются пока единственным материалом, характеризующим в общих чертах архитектурный облик церкви.

Первое упоминание об армянской церкви содержится в одном из номеров газеты «Терские ведомости» за 1871 г., где имеется короткое сообщение: «В Грозном никак не могут достроить армянскую церковь. А строить начали давно»[1]. Точное время завершения строительства неизвестно, однако в той же газете за 1873 г. упоминается уже действующая армяно-григорианская церковь, которая именуется «Армянской». О ней далее сообщается в «Терских ведомостях» за январь и май 1876 г., а в 1888 г. она упоминается в труде военного историка Г. Н. Казбека[2].

На плане города за 1923 г. видно, что армянская церковь, помеченная № 11, находилась в самом центре города, у левого побережья р. Сунжи. При внимательном осмотре фотоснимка (рис. 1), а также учитывая воспоминания старожилов города, можно определить и точное место ее расположения: церковь стояла по проспекту Революции (бывшая ул. Дундуковская) между зданием средней школы № 2 (бывшая женская гимназия, см. на рис.) и новым корпусом Нефтяного института, соприкасаясь с территорией сквера им. Лермонтова.

По фотоснимкам, где просматриваются разные стороны здания, можно в самых общих чертах охарактеризовать его объемно-пространственное решение. Церковь имела крестовокупольную, удлиненную по

---

[1] Терские ведомости. 6 августа 1871, № 34.

[2] Г. Н. Казбек. Военно-статистическое описание Терской области. Ч. 1. Тифлис, 1888, с. 28.